

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 2.60 Տոյա
Վեցամսեայ 1.50

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու քիւ մէկ ծրարով
Տարեկան 14 Տոյա


Վեցամսեայ 7 Տոյա

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տոյա
Վեցամսեայ 1.50

Կ Ա Ն Խ Ի Կ

Ծանոցման տողը
20 տանքիւ



Լ Ր Ա Դ Ի Ր

Ա Ջ Փ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔ ՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Rédaction du journal

„Iraouunk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

Иравункъ

ВАРНА

Գրութիւնք եւ չիւ
տրութիւնք

ՅԱՆՑԱԻՈՐ ՈՐՈՇՈՒՄ

«Շարժում» ի , որ Դաշնակցութեան ծառայութեան տակ գրութեան կիսապաշտօնական օրգան է , 606 թիւը կատարեալ անակնկալ եղաւ մեզ համար :

Պ . Վարդօ , իւր սեփական օրգանի այդ համարում , առանց որ մեր կողմից որեւէ դիմում եղած լինէր իրեն , ինքնաբերաբար յայտնուեալ է մեզ , և ի դիտութիւն ընդհանուր հայ հասարակութեան , ի հարկէ , որ Դաշնակցութեան վերջին որոշումները եղած են , վերաբերեալ կուսակցութիւններու միացման խնդրին , «նրանց (կուսակցութիւններու) հետ երբեք բանակցութեան չ'տեսել և պաշտօնական յարաբերութիւններ չ'ունենալ» (սիկ) :

Դաշնակցութեան այս որոշումը , կարգում ենք միեւնոյն թերթում և միշտ պ . Վարդօյի գրչին տակ , եղած է այն պատճառաւորութեամբ որ իւր «յեղափոխական կոչման մարմիններու և խմբակներու մէջ յեղափոխական բարոյականը բացարձակապէս ընկել է» :

Պ . Վարդօ որոշ չէ ասում թէ երբ եւ ուր Դաշնակցութիւնը կայացրել է այդ տարօրինակ և օտարտի որոշումը . բայց պէտք է հաւանական կարծել որ այդ որոշումը տրուած լինի Դաշնակցութեան վերջերս գումարած ընդհ. պատգամաւորական ժողովին մէջ :

Խնդրի մէջ կարեւորութիւն ընծայող կէտը այդ չէ , իհարկէ , այլ այն որ այդպիսի որոշում կայացած է Դաշնակցութեան կողմից , որի ստոյգ լինելու մասին դժուար թէ կարելի լինի կասկածիլ : Թերթի կիսապաշտօնական հանգամանքը եւ ծանր պատասխանատուութեան հարցը , որ անխղճի կերպով կապուած է այդպիսի յայտարարութեան հետ , անկարելի կ'դարձնեն որ և է կասկած :

Ընդունելով հետեւաբար , որ «Շարժում» ի յայտարարած այդ

որոշումը անփութելի մի իրողութիւն է մեր դաշնակցական յեղափոխական սարեգրութեան ամենավերջին արձանագրութիւններու մէջ , առաջին խոշոր հարցը , առաջին խոշոր զարմանքը անցնելուց յետոյ , որ գալիս է մեր գրչի տակ , հետեւեալն է .

Այս , ինչու , հարցնում ենք մենք , ինչու , ի՞նչ արդարացնող և հիմնաւոր պատճառներով կայացնել այդպիսի որքան օտարտի և անհեթեթ , նոյնքան ծանր և պատասխանատու որոշում : Այս հարցման մենք ոչ մի պատասխան չենք գտնում : Գուցէ կարելի լինէր մի կերպ էլի հայտնել , քանի որ վաղուց սովորած ենք նրան , առանց սակայն արդարացնելու նրան , մի որոշման հետ , որ ձգտէր դեռ եւս պահպանել իրերի միեւնոյն գրութիւնը , ստատու կուօն , ինչպէս ասում են : Այդ եղբակցութեան գալը դաշնակցական պատգամաւորական ժողովի կողմից , կ'լինէր մեր հուսադրոյն բաղձանքը՝ եթէ շատ կ'լինէր նրանից աւելին սպասել :

Բայց մենք ամենեւին , այս , ամենեւին չենք կարողանում հասկանալ և մեզ բացատրել թէ ինչու համար Դաշնակցութիւնը չ'բաւականանալով դրանով , աւելի էլ առաջ է գնացել և որոշել է միեւնոյն իսկ խզել ամեն պաշտօնական յարաբերութիւններ ու բանակցութիւններ իրանից դուրս գտնուած բոլոր կուսակցութիւններու հետ անխտիր :

Ուրեմն ի՞նչ , այլ ևս բաց ու արձակ կուրսն է որ պէտք է տիրէ յեղափոխական հրապարակի վերայ : Ուրեմն ի՞նչ , դեռ պանները յե՛տ են կանչուած վերջնականապէս : Եւ ո՞չ իսկ ոչ տիմարտուն , ալ ա ճապօն . . . Աստուած իմ , ինչպիսի՞ օրերի ենք հասել :

Բայց ոչ , Դաշնակցութիւնը բացատրում է այդ որոշումը : Նա ասում է որ իշխանից դուրս գտնուած յեղափոխական մարմինները բացարձակապէս ընկած են բարոյապէս : Ահա՛ միակ

պատճառաւորութիւնը , որը գրում ենք , այդ որոշումը յայտարարող օրգանին մէջ , թէ՛ արեւօք կան ուրիշներ էլ , այդ կարող է լինել , բայց այդ է որ տրուած է մեզ մի՞նչ :

Բայց այդ ի՞նչ հարց է որ դրել է դաշնակցութիւնը՝ պատճառաւորութեան համար իւր այդ որոշումը , Ո՞րն է այդ բարոյականը , որը նա միայն ինքը ունի որպէս թէ և որից բացարձակապէս դուրի են գտնում իրանից դուրս գտնուող միւս մարմինները : Եւ ի՞նչ է հասկացում այդ բարոյականով , վերաբերմամբ ամբողջ կուսակցական կադմակի , պուած մարմիններու , միմեանցից աւելի կամ նուազ թւով անհատներու համախմբութեան , որոնցից մէկն էլ , յար և նման , ինքն է , ինքն իրան իրիտ բարոյական համարող Դաշնակցութիւնը :

Մենք հասկանում ենք , երբ մեզ խօսում են տրուած կադմակեւորութեան տրուած մէկ կամ մի քանի անհատներու բարոյականի մասին : Բայց ուղղակի չենք հասկանում , ոչինչ չենք հասկանում , երբ բարոյականի խօսքը լինում է ամբողջ մարմիններու կամ մարմիններու ամբողջութեան մասին , որոնք միշտ և ամեն տեղ կարող են ունենալ իրենց մէջ առաւել կամ նուազ թիւով անբարոյական կամ բացասական անհատներ :

Մի՞թէ իւրօք կարող է Դաշնակցութիւնը ինքնիրեն խաբել կարծելով կամ կարծել տալով թէ ինքը միակը Աստուծոյ ընտրեալն է և չունի կամ չէ կարող ունենալ իր մէջ ոչ մի գոտտ , ոչ մի բորտ , ոչ մի կադ , ոչ մի կոյր անգամ , միեւնոյն միւսները , ընդհակառակը , Աստուծոյ անիմաւորներն են , դրախտից վաճառածները , հեթանոսները :

Սա ծիծաղելի է : Սա և ցաւալի է : Եւ ո՞րոքից է Դաշնակցութիւնը ստանում իւր դատաւորական պաշտօնն ու կրիտիկ թիւը իւր ուղածին պէս , դուրս փակ նիստերով , դատելու , դատարարութեան և վճիռներ արձակելու ուրիշ կուսակցութիւնների նկատմամբ , որոնցից նա ոչ մի չափով աւելի սիրուած ու շոյուած լինելու իրաւունքը չունի այն ժողովրդից , որի փրկութեան մեծ գովի նուիրուած են նրանք բոլորն էլ իրենց ոյժերով , իրենց աշխատանքով և իրենց հակադրած գործերու եղանակով ու միջոցներով :

Դաշնակցութիւնը , եթէ կարծում է , և բոլոր այն կուսակցութիւնները , որոնք կարող են միեւնոյն կարծիքն ունենալ իրենց մասին , թէ ինքն է որ կոչուած է փրկելու հայ Ազգը , հայաստանը , չարաչոր սխալում է : Այդ փրկութիւնը ոչ մի յարանուանութիւն չունի : Այդ փրկութիւնը ոչ մի կուսակցութեան առանձնապէս չէ կարող պատկանել , եթէ բազմ ունենայ հայ ժողովուրդը համբերութեամբ , ինչպէս այդ մեր հաւատքն է : Գործը սկսուած է , տարուած է և տարուած է , առանց բացառութեան , անխտիր բոլոր յեղափոխական ոյժերի կողմից , որոնցից իւրաքանչիւր ունեցած է , ունի և կուսենայ իւր աւելի կամ նուազ բաժինը ընդհանուր գործին մէջ : Յաջողութեան փառքը , եթէ պէտք է փառքի մասին խօսիլ , է և կ'լինի բոլորին և ոչ մէկին առանձնապէս :

Դաշնակցութեան այս որոշումը , կրկնում ենք , մեզ համար մի անակնկալ է : Նա չ'ունի ոչ մի իմաստ նա նոյն իսկ շատ վատ գաղափար է կադմել տալիս նրան վայր բերողների , նրան կայացնողների մտաւորականութեան մասին :

Մենք չենք գտնում այդ որոշման մէջ ոչ մի լրջութեան նշոյլ : Նա թւում է որ արդիւնք է ոչ ուրիշ բանի , բայց եթէ կուսակցական ներք. գծուած հաշիւների , որոնցից վերջէ կարողացած բարձրանալ Դաշնակցական պատգամաւորական ժողովի մտածողութեան միջինը :

Այդ չէ բոլորը Դաշնակցութեան այդ որոշումը մենք համարում ենք ուղղակի ամօթ և նախա-

տինք յեղափոխական հասկացողութեան, յեղափոխական գործի և նրա պահանջի:

Այդ որոշումը, եթէ չորրորդ նա վերջին պահուն բարձր խոհանուրութեան ոյժի տակ, ընդունակ է դէպի յետ նետելու Կայկափն Ազատագրութեան գործը մի ժամանակով, որի տեղում թեան մասին դժուար կլինի նախագուշակութիւններ անել:

Դաշնակցութեան այդ որոշումը գալիս է բոլորովին անժամանակ: Այն պահուն, երբ դրուած է ընդհանուր հայութեան առաջ բոլոր հայ յեղ. կուսակցութիւնների ընդհանուր միութեան հարցը, այդպիսի մի որոշման յանգիլը ուրիշ բան չէ, բայց եթէ գնալ ուղղակի ընդդէմ ընդհանուր բաղձանքի, ընդհանուր կամքի:

Դաշնակցութիւնը գործ է դրել մի ամենախոշոր սխալ. նա այդ որոշումով առել է իր վերայ մի ամենամեծ պատասխանատուութիւն: Նա պէտք է գիտենայ որ ինչքան էլ մեծ լինին իւր կուսակցական ճիգերը՝ ձգելու յեղափոխական բոլոր ոյժերը իւր շրջանակի մէջ, անկարող կլինի սակայն հասնել այդ նպատակին: Նա պէտք է գիտենայ նմանապէս որ նա ինքը միակը չէ որ կարող է լրացնել մեծ Գործը: Այդ Գործը կարող է լրանալ և գլուխ դալ համագործակցութեամբ բոլոր յեղ. ոյժերի, միացած մի մարմնի և մի ուղղութեան մէջ:

Նրան երբեք չի յաջողի ներկայացնել Գործի ամբողջութիւնը: Նա է և կլինի, առաւել կամ նուազ մեծութեամբ, միշտ այդ Գործի ամբողջութեան միայն մի մասը:

Կրկնում ենք, Դաշնակցութեան արած վերջին որոշումը մի սխալ է, որից կտուժէ ամենից առաջ նոյն իսկ ինքը: Դա անտակտ է: Դա անքաղաքագիտական է:

Տրուած ներկայ հանգամանքներում, նա նոյն իսկ կազմում է մի յանցանք, եթէ նրա առաջը չշտապի առնել Դաշնակցութիւնը առաջին ներկայացած առիթով, Այդ առիթը ընծայուած է արդէն: Հ. Յ. Միութեան կոնգրէսի հրաւիրագրերը ուղարկուած են յեղ. բոլոր կուսակցութիւններին, ինչպէս իմացած նք, որոնք, մենք յոյս ունինք, առանց բացառութեան, կպատասխանեն նրանց դրականապէս և կկատարեն իրենց հայրենասիրական պարտականութիւնը՝ հաստատելով ցանկալի ընդհանուր Հայ Յեղ. Միութիւնը:

Դաշնակցութիւնը, մեր կարծիքով, պէ՛տք է օգտուի այդ առիթից և սրբէ այդ յանցանքը:

Հմայեակ Խոշարդեան



Ն Ա Մ Ա Կ Ե Բ Կ Բ Է Ն

... 5 Մարտ 1904

Այժմ մեր երկրի վիճակ շատ անսահման զարճացած է, անտեսական տագնապ սոսկալի է, տուրքերու պահանջներուն և այդ առթիւ կատարուած զեղծումներուն, կողոպուտներուն, բանտարկութեան չափ ու սահման չկայ: Կենաց և ընչից ապահովութիւն գոյութիւն չ'ունի, ոչ ոք կրնայ իր տունէն դուրս ելնել՝ չէ թէ քանի ժամ հեռու գիւղ մը կամ որ և իցէ գործի մը երթալու, այլ նոյն իսկ ժամ երկուքէն վերջ լարեկամի մը այց տալու: Կարող էք ուրեմն երեւակայել ժողովրդեան ա՛ն ու սարսափն: Ի հարկէ ոչ ոք սիրտ կ'ունենայ այլևս իր ապագան մտածելու, օրապահիկ իսկ մտածել շատ է:

Ձօրքի ուտեստն անգամ գոհացուցիչ չ'ըլլալով, չի լինաց ահագին չփութութեանց պատճառ դառնար, նոյնիսկ հրահանատարի տան վրայ և անձին յարձակում ըրին, ուր մնաց խեղճ ժողովրդեան ծծծն ու կողոպուտն որ միամիտ տուն կը դառնար շուկայէն:

Այս տեսակ դէպքեր շատ անգամներ պատճառ եղած են ժողովուրդի ահաբեկման և թերևս յառաջ բերելին մեծամեծ դէպքեր և թէ կոռուակալի քարեացալուստը ինչ գիմաց չառնէր, է՛նչ ի՛նչ կը կարծէք, մինակ տիրող տարրից, մինակ վայրերի ազդից այս փորձանքներ... է՛նչ մի որ փորձանքներուն փորձանքը նոյն իսկ մեր մէջէն, մեր կրօնից, մեր հաւատքից, մեր մտից ու ոսկորից են: Ա՛յս այս լիարօշներ (դաշնակցականներ) թերևս մէկ երկուքից աւելի չկան հոս, և սակայն մեր իսկ պատանեկութիւն խաբած խաբւրած են զանազան խոստումներով...:

Աւելորդ համարեցի առօջ լսել անոնց գործած անթիւ անհամար չահատակութիւններու և խաբեբայութիւններու երկար շարքը. գիտեմ թէ ձեզ ծանօթ է արդէն, ասոնք սղորակներ դարձած խեղճ ժողովուրդի արիւն կը ծծեն: Ասոր հանդէպ եթէ կայ մի մխիթարական կէտ մեր իններեի զարթնումը և լուրջ ու եռանդուն գործունէութեամբ ատոնց առաջն ունենլն է, բան մը որ մեծ յոյս ու հաւատք ներշնչած է մեզ և վստահ եմ թէ ներշնչել պիտի տայ նաև մեր տարագիր և զգայուն հայրենակիցներուն, որպէսզի անոնք ևս փութան զօրավիգ հասնիլ կազմակերպուած ոյժով...:



Բ Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Իւր ժամանակին արձանագրեցինք այս սիւնակներէ մէջ քաղաքական աշխարհում կատարուած նորագոյն ամենախոշոր փաստը—Անգլո-Ֆրանսական համաձայնութիւնը:

Այն ժամանակ, երբ մենք ամփոփեցինք այդ ամենակարեւոր ակտի գլխաւոր եւ հիմնական պայմանները, ինչիցը տակաւին գտնուում էր իւր զարգացման շրջանի մէջ և չէր հասած իւր կատարելալ հոգւնութեան, Այժմ, այս րոպէիս, այդ ինչիցը արդէն լուծուած վերջացած է: Երկու խոշորագոյն ազգերի արտաքին քաղաքականութեան ոչ նուազ խոշոր ներկայացուցիչները միջև սկսուած բանակցութիւնները արդէն աւարտած եւ նրանց վերջնական արգիւնքը կազմող դրականագիտական սկզբնական զօկուածնները ստորագրուած են երկուսուսեք: Ինչ որ մնում է դուեւս անել այդ նկատմամբ, այդ երկու ուսովաւար—սահմանադրական Ազգերի պարլամենտները նուիրագործման գործողութիւնն է, որին կարող են և կսպասուին որ ենթարկուին այդ միանգամ զմուտ, պատրաստուած, վայրբերած որոշումները: Բայց ինչքան էլ մեծ դժուարութիւններ պատուին երկու երկրները բարձրագոյն ժողովրդական խորհրդարաններում կատարուած համաձայնութեան այլ և այլ կէտերի նկատմամբ այս կամ այն դժգոհ կամ դժուարահամ պատգամաւորի կողմից, չէ կարծուում որ նրանք բաւական ոյժ ու կարողութիւն ունենան քանդելու այն շէնքը, որի ամբողջութիւնը արդէն ստացած է Լա Մանչի երկու ասիերի ընդհանուր համաձայնութիւնը: Բացի դրանից, եթէ Ֆրանսական Սահմանադրական տրամադրութեանց համեմատ պատասխանատու նախարարի կողմից եղած կարգադրութեան բոլոր կէտերն են ենթարկելի պարլամենտի (չամբը) վերին հաւանութեան, Ֆրանսիայ չէ կարող լինել սահման չունեցող համայնութեանց համար, որոնցից Անգլիական պարլամենտին (համայնքների ժողով) ենթարկելի կլինի միայն կատարուած ակտի այն արամադրութիւնները, որոնք վերաբերում են անգլիական նախարարի կողմից իրա հետ համաձայնութեան մտած երկրէն արուած, զիջուած անգլիական հողերին, ըստ որում, անգլիական կաբինէտը անկարող է, առանց պարլամենտի խորհրդակցութեան ու հաւանութեան, զիջանել որ և է օտար կառավարութեան որ և է հողի կտոր, որ պատկանում է մեծ Բրիտանական կայսրին, ինչպէս այդ նկատմամբ վերջերս յայտարարեց Համայնքների ժողովում Բալֆուրը, անգլիական կաբինէտի Առաջինը: Բայց նոյն իսկ Ֆրանսական Շամբրում վիճարանութիւնները կ'անան, ինչպէս երեւում է, համաձայնութեան ամենագլխաւոր կէտերի վերայ, որոնք բացի, դրանից, դժուար է կարծել որ յանդիմ կատարուած խոշոր և խիստ համակրելի իրողութեան նկատմամբ բացառական արդիւնքի:

Կարելի է, հետեւաբար, քաջութեամբ թոյլ տալ ասելու որ Անգլո-Ֆրանսական վերջին համաձայնութիւնը դրականագիտական մի կատարուած վերջացած իրողութիւն է. որ եթէ նոյն իսկ ենթարկուի նոր փոփոխութեանց, նրանք չեն ունենայ նրան ոչնչացնող, նրան մեղցնող հանգամանք:

Ասացինք որ Ֆրանսայում այդ համաձայնութիւնը հանդիպեցաւ ընդհանուր հումանութեան: Այդ երկրի պոչատեական, կիսապաշտական եւ խաղաղութեան կողմնակից դէմոկրատիկական մամուլը ուրախութեամբ արձանագրեց այդ փաստը: Բացառութիւնները շատ անշան դատուեցան: Միեւնոյն միծովիտեամբ և միեւնոյն ջերմութեան աստիճանով չընդունուեցաւ գոյց այդ կարգադրութիւնը Անգլիական մամուլի կողմից, որի մի կարեւոր մասը շատ գտաւ կայսրութեան կողմից սրուածը, և, ընդհանրապէս, քիչ գտաւ հանրապետութիւնից առնուածը, այնու ամենայնիւ, որպէս վերջին եզրակացութիւն, երկու երկրներու միջև կատարուած համաձայնութիւնը ողջունեցաւ գրեթէ անխտիր բոլորի կողմից, որպէս մի ամենահամակրելի և ամենաանհրաժեշտ գործ, նախ իրենց, երկու դրացի երկրներին ընդհանուր քաղաքական, անտեսական եւ գաղթականական շահերի տեսակետից, ապա ընդհանուր եւրոպական եւ աշխարհի խաղաղութեան տեսակետից:

Դիմել այստեղ համաձայնութեան բոլոր կէտերը իրենց մասնաձայնութեանց մէջ աւելորդ ենք համարում: Բաւականանաք ասել միայն որ այդ համաձայնութիւնը կեցած է, միշտ ամփոփելով, 1, մի պաշտօնադրութեան, (կոնվենցիա) և 2, երկու յայտարարութեան (դէկլարացիա) վերայ: Առաջինով Ֆրանսան պայմանաւորուեմէ յետ ասել իւր բացառիկ իրաւունքները որոնք նա ստացած էր, Ռտրէխտի զաշտադրութեան զօրութեամբ, Նորեմբերի (Կանադայի կողմը) մի մասի վերայ (Ֆրէնչ Շօր): Ֆրանսան թողնում է այդ կողմի ամբողջապէս Անգլիային, պահպանելով սակայն տեղացիներին հետ համահաւասար իրաւունքներ ձկնորսութեան: Այս զիջողութեան որպէս փոխարինութիւն՝ Ֆրանսան ստանում է Մեծն Բրիտանիայից Արեւմտեան Աֆրիկէի կողմը Լօս կղզիները և Գամբիայի ու Չադ լճի կողմերում մի քանի հողային կեցեցաստաններ (չնորոշում), որոնք շատ մեծ կարեւորութիւն ունեն իւր գաղթականական քաղաքականութեան համար: Երկրորդով Ֆրանսան զիջում է Անգլիային նրա ձեռք բերած բացառիկ զինուորական տիրապետութիւնը և վարչական իրաւունքները Եգիպտոսի վերայ, անխախտ պահպանելով միշտ օտոմանան գերիշխանութեան սկզբունքը այդ երկրի վերայ և ստանալով Անգլիայից սրա որոշ յայտարարութիւնը և համակերպումը Սուէզի ջրանցքի բացարձակ շէջողութեան, մի ոկզմուք, որ արդէն ընդունուած էր մնացած բոլոր տէրութիւնների կողմից: Բացի դրանից, Ֆրանսան պահպանել է տակն Եգիպտոսում միջջազգային մի շարք հաստատութիւններ, Պարտքի, Արկղը, խառն դատարանները և Ֆրանսական վաճառականական, դպրոցական, գիտական արդէն ձեռք բերուած իրաւունքները, թողնելով Անգլիային ազատ՝ գործածելու երկրի վերայ, ինչպէս իւր կամքըն է, Պարտուց Արկղի մէջ գոյացած աւելի եկամուտը, որ համարում է մինչև 180 միլիոնի պատկանելի գումարին:

Այս զիջողութեան որպէս փոխարինում, Ֆրանսան ստանում է Մարտիկոմ, ուր անգլիական ազդեցութիւնը նուազ կարեւորութիւն չէր ստացած թէ՛ քաղաքական եւ թէ՛ անտեսական տեսակետերով, առանձնաշնորհաւ Տէրութեան իրաւունք, որի զօրութեամբ նա միակն է լինել:

լու ամեն կերպով օգնութեան դալու ամեն ոյժից ու կարողութիւնից ընկած Սուլթանին՝ վերանորոգելու համար երկրի քաղաքական, անտեսական, զինւորական, վարչական, դատարանական ֆունկցիաները եւ զննելու համար այդ մշտական անխնայանութեան մատուցած երկիրը, որ իւր սահմաններով մօտ առ մօտ կոյած է, ինքարձակ տարածութեան վերայ, Ալեքսանդրիային, այնպիսի պայմաններով մէջ, որոնցից օգուտը նախ ինքը, Մարօքը, ապա Ֆրանսայի, Հանրապետութիւնը, որպէս առանձնաշնորհուած Տէրութիւն, եւ ապա բոլոր աշխարհը։ Խօսք չկայ որ Անգլիան երաշխաւորած է այնտեղ իւր առեւտրական շահերը որոնք անշնչան չեն, պահպանել տալով այնտեղ բացառաւոր սկզբունքը բոլոր երկրներէ վաճառականութեան համար։ Բացի դրանից, Անգլիան նախազգուշութիւն ունեցած է երաշխաւորելու Ջիբրալթարի նեղուցի ապահովութիւնը, պայմանաւորելով Ֆրանսային որ Մարօքի Ալիքիկեան եղբայրները վերայ որ եւէ ամբողջիւն չպէտք է կառուցանէր։ Այս կէտը զլիաւոր է Անգլիայի համար, որը համար առ հասարակ նեղուցիներ ապահովութիւնը իւր սեփական ձեռքերէ մէջ կ'ունենէ եւ մահուան խնդիր է։

Յայտարարութեանց երկրորդ մասը տրամադրութիւնները վերաբերում են մէկ կողմից Սիւնի երկու երկրներէ զաղթականական շահերի ու իրաւունքների աւելի լաւ կարգադրութեան, միւս կողմից Մադագասկարին, ուր Անգլիան հրաժարուած է բոլորելուց Ֆրանսայի կողմից հաստատուած մաքսային տարիֆին, եւ Նոր-Հելլանդիան կղզիներին, ուր ռուսները կոտորած է առ այժմ։

Սրանք են Անգլո-Ֆրանսական համաձայնութեան բոլոր կէտերը, իրենց ամփոփ ձեւին մէջ։

Սյուպէս, երկու դրացի երկրները Անգլիան եւ Ֆրանսան, որոնց մէջ դատարար, պատմական ատելութեան ու թշնամութեան անտապաքելի ախպէս ժառանգական էր դարձած, ինչպէս այդ անսուղ եղբայրները անսպասելի աշխարհում այլ եւ այլ կենդանական ցեղերի, ռասերի միջեւ, որոնք, բացի իրանից, ներկայ բոլորում, առաջին կանոնադրանքն են Ռուսո-ճապոնական պատերազմի պատահական (էվանտիէլ) ծաւալման նախաձեռնողները մէջ, հակառակ ամեն սպասուածի, ամեն անակնկալութեան, մօտենում են միմեանց ամեն ժամանակից աւելի եւ, առանց զենքերի շաչելի, շառաչելի, կարգադրում են իրենց միջեւ վաղուց ի վեր առկա մնացած խնդիրները, որոնցից իւրաքանչիւրը բաւական էր լիովին թելթելու համար երկու հզօր Ազգերի միջեւ։

Կարելի էր սպասել, զուցէ, եւ ոչ առանց իրաւունքի եւ հիմքի, որ Ռուսիան եւ ճապոնը, անձնասիրութեան եւ նախանձի զգացումներ արթնացած տեսնէին իրանց հոգու մէջ, տեսնելով որ իրենց փոխադարձ զայնակիցները, զէպի որոնք անկարելի է որ չգառնային եւ չգառնան իրենց աչքերը սոսկալի պատերազմի աննախատեսելի ծանր, նեղ, զոհարկին պարագաների մէջ, որոնք միշտ կարող են ներկայանալ, ինչպէս այդ իրականութիւն է այս բոլորի նախնից առաջին համար, փոխանակ պատերազմական արամազբորութիւններ ժամանակակից զգացումներէ որ փոխանակում են միմեանց հետ եւ հենց իրենց կնճառ եւ զօրութիւն կազմութեան մէջ, համաձայնում են զրի հարուածով, լեզուի իմաստութեամբ, աշխարհի քաղաքական փոփոխութեան ենթակարգելու, աշխու ամենաշահեկան, Անգլո-Ֆրանսական համաձայնութեանը, ոչ ինչ չհերքու մինչեւ հիմա, ոչ Ռուսաստանից ոչ Նիպոլեոնի երկրից, որ փաստացի, իրաւունքով եւ կարողութեամբ, կամ կասկածին, կամ թշնամութեան։

Սա շատ զոհարար եւ ներկայ հանգամանքներում, կարելի է համարձակ ասել, մի քաղաքական անկարելիութիւն է, սակայն, իւր նուազագոյն չափին մէջ, Անգլո-Ֆրանսական համաձայնութիւնը, որն է առ այժմ, խիստ հաւանական կարելի է կարծել որ նախադասութիւնը, որին մի հնարաւոր միջադատութիւն, որին կարող են պէտք ունենալ պատերազմող երկու կողմերն էլ, երբ նրանք յոգնած, վատակամ զգան իրանք իրանց բացուած ներկայ պատերազմին մէջ, որ խոտանում է իրենց հետադիմաց աւելի ահեղ եւ աւելի երկար։

Արդարեւ, այդպիսի մի միջամտութիւն, երկու պատերազմողներ միջեւ, անկարելի չէ կարելի կարծել։

Եթէ մէկ կողմից զոհարար է կարծել որ ճապոնական փոքրիկ զինուորները, այժմ յաղթական ծովերի վերայ, վերայ, գնան մինչեւ Սիբիրիայի խորքեր, մինչեւ Սեւ-Ռուսաստան, զոհարար է միւս կողմից նաեւ կարծել որ Կուրո-պատկերը, այժմ յայտնապէս պարտուած միւսնոյն ծովերի վերայ, կարող լինի յարգել իւր տուած խոստումը, այն է՝ մարքի Կորէան ճապոնիկից եւ զուցէ, գնալ մինչեւ Տոկիո։

Իրերի գրութիւնը այնպէս նախատեսել կտրել լինելով, ամենահաւանական է կարծել որ կողմերից կարող է լինել միջամտութեան, որի համար երկու Ազգերը, Անգլիան եւ Ֆրանսան, չնորհիւ սանաւանդ իրենց՝ կնքած համաձայնութեան, եւ եթէ չձգէ, իհարկէ, որ եւ է անակնկալ, մի բան որ միշտ կարող է պատահի, միակ նախադասութեամբ, յարմար, սրտած եւ պատրաստուած ոյժերն են։

Հ. Խ.

Թ Ղ Թ Ա Վ Յ Ո Ւ Թ Ի Ն

ՍՕՅԻԱ 5 Ապրիլ 1904

Յայտնի է թէ քաղաքի մէջ տարի մը չափ առաջ Աղքատախնամ ընկերութիւնը մը կազմուեցաւ, եւ մի քանի աշխատակից ու բանիւրուն անձանց եւանդուն դործակցութեամբ, ընկերութիւնը քիչ ժամանակի մէջ անդամներու ստուար թիւ մը ունեցաւ, որոնցմէ կանոնադրապէս շաքարակաւ տուրքեր կը հաւաքուէին, ասոնց միջակայով նաեւ բացառիկ նուէրներ, բազմաթիւ պէտքեր կարձ ժամանակամիջոցի մը մէջ ընկերութիւնը իր նպատակին համար արամադրելի կողմից գումար

մ'ունեցաւ։

Բայց այսօր ցարով կը ծանուցանենք թէ, մի քանի շաբաթ առաջ քաղաքիս Աղքատախնամ ընկերութիւնը իր մահկանացուն կնքեց, խոր սուգի եւ տրամուլեան մէջ համակերպ քաղաքիս աղքատները եւ կարօտ դասակարգը։

Մեր հասարակական կեանքին մէջ ամեն ազգային գործը եւ ազգագուշակ ընկերութիւններ կսկսին սիրելի ոգեւորութեամբ մը եւ հոանդուն գործունէութեամբ մը, որոնք սակայն, ի ծագել արեգական ցամաքին։

Մեր ազգային բնաւորութեան յոռի մէկ կողմը յատկանշող լինելուց թնեւէն մին է ասիկայ, որուն վրայ զարմանալու չէ։

Թէ ինչ էր Աղքատախնամի վաղաժամ մահուան պատճառը, պէտք չէ շատ խորքերը հրկայ. սա չափը բաւական է ըսել թէ, եսը կամ Անձնակառ-ութիւնը, քիչ մ'ալ կուսակցական խեղ ոգին, մեծագոյն գերը խաղացած են քայքայումի այս սխալ գործին մէջ, որը բնաւ պատուաբեր չկրնար ըլլալ մայրաքաղաքիս հայ հասարակութեան համար։

Նաեւ, ամիսներ ուսջ, ընթերցարան մը հիմնելու ազնիւ գաղափարը յղացուեցաւ եւ առ այդ առժամայ մարմին մը կազմուեցաւ, որ միջոցներ ձեռք առնէ այդ շատ կարեւոր եւ զօտակար գաղափարը մարմնացնելու։ Յետոյ որոշուեցաւ որ առ նուազ 600 ֆր. պատրաստ դրամ հաւաքուէր եւ այնպէս բացուէր ընթերցարանը։ Այդ դրամը պիտի գոյանար նոյն միջոցներ անդամ արձանագրուող 55—60 անձերու որոշեալ ամսատուրը մը վճարելն, ըլլալիք նուէրներէ եւ ուրիշ այլ միջոցներէ։

Առժամայ վարչութեան վեց անկը լրանալուն առթիւ ընդհանուր ժողով գումարուեցաւ, հաշիւները զննելու եւ նոր վարչ. Մարմին ընտրելու համար։ Հոտ ալ եսը եւ կուսակցական տրամադրութիւնը պատակտում առաջ բերին եւ անդամներու մէկ մասը հրաժարելով, մի քանի օր վերջ իրենց համար մասնաւոր ընթերցարան մը ցային, մէկ երկու անձնաւորութիւնէ քանի մը հարեւր ֆրանք փոխառութիւն ընելով՝ եւ ազգայնոյ մը քով գտնուած 250 կտորէ աւելի գրքերը գնելով։

Այսպէս, նախապէս ընթերցարանի նպատակին համար հաւաքուած մօտ 300 ֆր. փաստային խնայողական Մատուց մնալով հանդերձ, ազգին ընթերցարան մը բացուեցաւ ուր կը յաճախէին միայն դոյն բացողները եւ անոնց գաղափարակիցները։

Մենք կը փափաքէինք որ պատակտող երկու կողմերը մոռնալով անձնական եւ կուսակցական ամեն հաշիւ, համաձայնէին իրարու հետ եւ միմեանով մէկ մարմին կազմէին, եւ ընդհանուր քուէարկութեամբ նոր վարչութիւն մը ընտրելով անոր տրամադրութեան տակ գնէին նաեւ խնայողական սնտուկը գտնուած պատրաստ գումարը։

Ասիկայ պիտի ըլլայ միութեան եւ եղբայրասիրութեան գեղեցիկ օրինակ մը, ընթերցարանը աւելի տեսական եւ հասարակուն հիմքու վրայ հաստատուած պիտի ըլլայ՝ ունենալով զուտ ազգային հանգամանք մը եւ ընդհանրական ձեւ մը գերծո եւ է կուսակցական ոգի։

Անիկա քաղաքիս երիտասարդութեան եւ հայ հասարակութեան ամենալոյսեր միջակայը պիտի ըլլայ, հոն ազատ մտւտ պիտի գտնեն ամեն գաղափարի եւ դասակարգի անհասանք եւ մեր գաղափարները եղ-

բայրա՛ն չիման մէջ պիտի պահեն յաւէտ, արդարացիներով գործնականապէս ընթերցարանի անունը որ է «Ազատ մտածում»։

Վարդապետն չ'են նաեւ ազգային եւ կեղեցական գործերը, եկեղեցւոյն եւ վարժարանին միակ եկամուտը կազմող ժողովուրդին կամաւոր ամսատուրը 8 ամիսէ ի վեր չ'են հաւաքուել, չ'ենք գիտեր ինչու։ Քահանան եւ ուսուցչուհին ամիսներէ ի վեր ամսական չ'են ստացել։

Սառն անտարբերութիւն մը կը տիրէ գէպի եկեղեցին, սկս կրօնքին այդ հիմաւորը բերող եւ մեր ազգութեան հնազարեան՝ ամբողջ եւ գէպի վարժարանը, որ ամեն ժամանակէ աւելի, այսօր, մեր մատաղ սերունդին՝ Բեթղէմի Աստղան նշանոր սրտին մէջ ազգասիրութեան սերմերը ցանկու եւ անոր շատադ հոգիին մէջ ազգային գիտակցութեան եւ հայրենիքի սիրոյ հունտերը անկելու միակ անկարանը։

Թաղական խորհուրդը հրաժարած է, նոր տարւոյ առժամայ թաղ, խորուրդ մը կ'աժմուած է, որուն անդամները բարեհաճաւ եւ ազգասէր անձնաւորութիւններ ըլլալով հանդերձ, այս պաշտօնին անյարմար եւ խակ են։ Անանկ տաքնապալի ժամանակ մը, երբ եկեղեցին 1500 ֆր. պարտքի տակ ճնշուած է, երբ կանոնաւոր—եւ ո'չ իսկ անկանոն—պիւտճէ մը չկայ, երբ հասարակութիւնը պաղ վերաբերում մ'ունի գէպի աղք. գործերը եւ իր կարելի չէ անմիջապէս թաղ, խորհրդոյ ընտրութիւն լիազարել՝ գէպ աղք. գործերու մատակարարութիւնը յանձնուելու է այնպիսի փորձառու մարդոց, որք կարենան իրաց ներկայ կացութիւնը աւելի լաւ ճամբու մը մէջ դնել։

Վարիէթի գերասնական խումբը որ շորս ամիսէ ի վեր մայրաքաղաքի կը գտնուէր եւ շարունակական ներկայացումներ կ'ուտար, երէկ իրիկուն իր վերջին ներկայացումը տալով կը մէկնի քաղաքէս գէպի միլիպէ-Պուրկսկ եւ Վառնա։

Ա.

ԱԶԳԱՅԻՆ

—Ինիկ Կ. Պոլսեցի Տ. Թաղերը Մեկընեան, որ քանի մը տարիէ ի վեր Վիէննա կը գտնուէր իր հնարած «Նորոյ» գործիքը՝ այսինքն քիչ ուժով շատ ուժ տրտադրող մեքենան կատարելաբար գործելու համար, իւր այդ մեքենայով զբաղած միջոցին՝ յղաչաւ Չայնաժամի (Ֆոնսօրթ) կամ Խօսուն—Ժ. մացոյցի (Ընթերթութ) գաղափարն ալ։

Չայնաժամը մէկ անգամէն, ուրոյ և յստակ մաղկային բարրաւոր պիտի ըսէ մեզ թէ ժամը քանին է միջոցեւ հիմա ստիպուած ենք մեկիկ մեկիկ և մոտադրութեամբ համբել ժամացոյցին հարուածները այդ գիտնալի համար։

Նայնպէս պիտի կրնայ օգտակար և հաճոյալի անակնկալներ պատճառել «բարի լսոյ», «բարի ախորժակ», «գիշեր բարի» և այլն մաղթելով մեզ՝ մեր մայրենի կամ ուրիշ բաղձացուած լեզուով մը։

